

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH

666 Richmond Road  
Cleveland, Ohio  
44143, U.S.A.

Area Code 216—Tel. 381-6590

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
Գլխավէնտ, Օհայօ

8 ՅՈՒԼԻՍ, 1980

Գերշ. Ս. Թորգոմ Արք. Մանուկեան,  
Առաջնորդ  
Առաջնորդարան, նիւ Եորկ, ն.Յ.,

Սիրելի Սրբազան Հայր,

Ծանօթ էք այն հրաւերին մասին որ եղած է Երուսաղէմի Պատրիարքարանին կողմէ բոլոր Երուսաղէմացի նախկին եւ այժմեան սաներուն որոնք ներկայիս կը պաշտօնավարեն աշխարհի զանազան անկիւնները իբրեւ եկեղեցական, Յոբելիւնական հանդիսութեանց եւ կրօնական ու ազգային խորհրդակցութեանց համար, տարւոյս Օգոստոսի առաջին շաբթուն:

Ներկայիս իմ պարագայիս հարցերը այնպէս մը դասաւորուած են որ կը թուի թէ պիտի կարողանամ ընդունիլ հրաւերը: Ծխական Խորհուրդի Գ. ներկայացուցի այս հրաւերը եւ անդամները առարկութիւն մը չունեցան երբէք, ընդհակառակը քաջալեր հանդիսացան նկատելով զայն իբրեւ արժանաւոր պարտաւորութիւն մը:

Արդ կը փափաքիմ տեղեկացնել ձեզի որ վերոյիշեալ պատճառաւ ծուխէս պիտի բացակայիմ Օգոստոսի առաջին կիսուն, արտասահման ուղեւորելով, եւ պաշտօնիս գլուխը վերադարձած պիտի ըլլամ Օգոստոս 17-էն առաջ, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնախմբութիւնը կատարելու համար: Յուսամ արգելք մը չէք տեսներ: Ծնորհակալ կ'ըլլամ ձեր եւս քաջալերութեան համար:

Մնամ Խոնարհ: Աղօթակից



Տ. Տիրան Բհնյ. Փարագեան